



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 11Ա

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆԸ ԳՈՐԾԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Վարդանյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Վարդանյանի անուն-ազգանունը հանել գործերի բաշխման ցանկից սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի հունիսի 28-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 28-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

2018թ. մարտի 27
ք. Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ